

**Ա. Ռեմիզովի «Սիրամարգի տակ» հեքիաթը և
իշխանությամբ օժտող թռչունը**

Մահակյան Հեղինե

Անփոփում

Հանգուցային բառեր. կոնստ աղջիկ, սիրամարգ, փյունիկ, Գամայուն, Ալկոնոստ, Միրին, Միմուրգ, Հրեղեն թռչուն, Ճշմարտության թռչուն, հաջողություն բերող թռչուն (դովլաթ դուշ)

Հոդվածում ներկայացված է Ա. Ռեմիզովի «Սիրամարգի տակ» հեքիաթի մի հատվածի տիպաբանական ու կառուցվածքային վերլուծությունը՝ ազգային բանահյուսական նյութերի զուգադրմամբ:

Ա. Ռեմիզովի հեքիաթի յուրահատկությունը լրացուցիչ պլոժետային գծի ներդրումն է՝ սիրամարգի միջոցով աղջկան գյուղի ավագ ընտրելը: Առաջնորդների, այդ թվում թագավորների ընտրության նման սկզբունքը լայնորեն տարածված է տարբեր առասպելական պլոժեներում:

Ելնելով նրանից, որ սիրամարգին նետելու միջոցով աղջկան գյուղի ավագ ընտրելու հատվածը Ա. Ռեմիզովի հեղինակային մշակման վերնագրի հիմք է հանդիսացել, կարող ենք ենթադրել, որ այս պլոժետային գիծը բացառիկ կարևորություն ունի դիտարկվող հեքիաթում:

Նշվում է, որ դրախտային առասպելական տարբեր թռչուններ ունեցել են խորհրդանշական իմաստ ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնեական ավանդություններում՝ հանդիսանալով միապետի նշան:

«Ճշմարտության թռչնի» միջոցով իսկության հաստատումը բավականին տարածված է այս տիպի հեքիաթային պլոժեներում: Երբեմն այս գործառնություն իրականացվում է անշունչ առարկաների միջոցով: Հայկական «Հուլիդա խանում» հեքիաթում քրոջ խոսքերի ճշմարտացիությունը հաստատվում է նուշի կանաչելով այն բանից հետո, երբ քույրը երեք անգամ կրկնում է, որ անմեղ է:

Հեքիաթները, որոնցում առկա է կախարդական թռչնի կերպարը, հիմնականում ընդգրկվում են «Կոնատը» (AaTh 706), «Հրաշամանուկները» (AaTh 707) կամ «Կախարդական թռչունը» (AaTh 569) հեքիաթային տիպերի մեջ:

A.Remizov's Fairy Tale "Under the Peacock" and the Bird Granting Power

Sahakyan Heghine

Summary

Key words: *armless girl, peacock, phoenix, Gamayun, Alkonost, Sirin, Simurg, Flame-Bird, Truth-Bird, Success-Bird*

The article presents typological and structural analysis part of A.Remizov's fairy tale "Under the peacock", in comparison with the national folklore materials.

In A. Remizov's tale, the introduction of an additional "framework" story line – the election of a village elder girl with the help of a peacock – is septic. This principle of choosing rulers, including kings, is widely represented in various mythological subjects.

Proceeding from the fact that the fragment of the election of the village headman by throwing a peacock reflected in the title of the author's processing by A. Remizov, we can judge the exceptional importance of this story line in the fairy tale in question.

It is noted that various mythical birds of paradise had a certain symbolic value in both the Muslim and Christian traditions, representing a sign of the monarch.

Confirmation of the truth with the help of the "bird of truth" is quite common in fairy tales of this type. Sometimes this function is assigned to inanimate objects. In the case of the Armenian fairy tale "Hulida Xanum", in confirmation of the truth of the sister's words, the almond is turning green after she repeats three times that she is innocent.

The fairy tales, in which the magic bird appears, are most often combined under the types of "Handless" (AaTh 706), "Wonderful Children" (AaTh 707) or "Wonderful Bird" (AaTh 569).

Հայ հին մի քանի մատենագիրների կենսաբանական պատկերացումների մասին

*Վարդանյան Ջարուհի
Կիրակոսյան Քրիստինե*

Հանգուցային բառեր. *մատենագիրներ, բնություն, բժշկական գրառումներ, չորս տարրեր, բիոլոգ, բնափիլիսոփա*

Հայ մատենագիրների աշխատանքներում հանդիպում են ոչ միայն փիլիսոփայական, տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական, այլև կենսաբանական, մասնավորապես՝ բուսաբանական, կենդանաբանական, կառուցվածքաբանական վերլուծություններ:

Քիչ չեն հայ մատենագիրների այնպիսի աշխատանքները, որոնցում հանդիպում են կենսաբանական վերլուծություններ և բժշկական գրառումներ: Մեր ուսումնասիրման առարկան եղել են հայ հին մի քանի մատենագիրների՝ Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու աշխատանքները:

Ա.Տեր-Պողոսյանը, մատնանշելով Եզնիկ Կողբացու գրառումները, նրան համարում է բնափիլիսոփա, բնագետ-բիոլոգ [6, 74]:

Եզնիկ Կողբացին հայտնի է իր «Եղծ աղանդոց» աշխատությամբ:

Եզնիկ Կողբացին գրում է արարչագործության մասին. «Գերագույն գոյն Աստված է՝ անսկիզբ, մշտնջենական, արարող և անտեսանելի, երևելի և աներևույթ արարածների սկզբնավորման պատճառը: Ջրերի մեջ գտնվող «զեռունները», ինչպես և «բնական կենդանությունները» կազմված են հետևյալ 4 տարրերից՝ օդից, հողից, ջրից և հրից» [3, 217]: Նշենք, որ Կարլ Լիննեյը 17-րդ դարում կենդանիների կարգաբանության մեջ նշում է «Զեռուններ» որոնց մեջ նա միավորում է սողուններին և երկկենցաղներին [6, 76]: Մինչդեռ 5-րդ դարում Կողբացին արդեն իսկ գրում էր դրանց մասին: Լիննեյով չորս տարրերի ուսմունքի պաշտպանը՝ հեղինակը գրում է. «Արեգակը թեև բարի է, սակայն առանց օդի զուգակցության այրող ու չորացնող է: Նույնպես և խոնավ բնության լուսինը՝ առանց արեգակի ջերմության խառնուրդի՝ վնասակար ու ապականիչ է: Եվ օդը՝ առանց ցողի խոնավության ու արեգակի ջերմության՝ վնասակար և փչացնող է: Ջրերը ևս երկրի հողը ողողում ու փչացնում են, բայց հողն առանց ջրերի պատռվում ու ճաքճքում է: Եվ այսպես չորս տարրերը, որոնցից կազմված է այս աշխարհը, առանձնակի միմյանց խաթարող են, բայց զուգակցի հետ համադրված՝ օգտակար ու շահավետ են դառնում: Սա, որ այսպես է, հայտնի է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են սովորել» [2, 11]:

Եզնիկը հետաքրքիր բացատրություն է տալիս ժամանակակից կենսաբանության առանցքային հարցերից մեկին՝ կենդանի և անկենդան բնության համեմատությամբ՝ կենդանի օրգանիզմների կարևոր հատկանիշը համարելով դատողական գործունեությունը, իսկ մարդկանց մոտ՝ նաև տրամաբանական մտածողությունը. «Եթե իցե և եթե չիցե՝ զայն ոչ գիտե... Եւ թե ջուր, թե հուր, թե երկիր, թե օդ,

թե իցեն և թե չիցեն՝ զայն ոչ գիտեն»: Այսինքն, «անշունչ արարածները» անգիտակ են, անզգա, գուրկ զգացողությունից, իմացական կարողությունից, բանականությունից [6,77]:

Մերժելով հեթանոսական տարապաշտությունը՝ Եզնիկը տրամաբանական սուր դատողություններով հերքում է Արեգակի պաշտամունքը. «Բնչպես պաշտենք Արեգակը, որ մերթ կազմված է իբր սպասավոր՝ հասնելու այն ծառայությանը, որի համար նշանակվել է, և մերթ գնում-թաքնվում է ինչպես զարհուրած՝ տեղի տալով խավարին՝ լցնելով այս մեծ տունը. ժամանակ առ ժամանակ խավարում է՝ որպես հանդիմանություն և ամոթանք իրեն պաշտողներին հայտնելով, թե «Ես պաշտամունքի արժանի չեմ, այլ նա է, որը ինձ ևս ամբողջ ցերեկը լուսավոր է պահում, իսկ զիշերը թաքցնում է, երբեմն-երբեմն խավարեցնում» [3, 217]:

Եզնիկ Կողբացին գրում է. «Նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն և զբիծն ի բաց պարզել, զի մի՛մթարքն՝ որ զբբօք շողայցեն, արզել հայելոց ի յստակութիւն լուսոյն լիցին» [4, 6]: Կենսաբանական տեսանկյունից այս արտահայտությունը կարելի է նմանեցնել աչքի եղջերաթաղանթի մակերեսին թաղանթի (փառի) առաջացմանը, որն այսօր որակավորում ենք որպես կատարակտ հիվանդություն:

Շարունակելով չարի և բարու խնդիրը՝ նա գրում է. «Չկա որևէ չար բան, որ էությանբ չար լինի. և կա ոչ թե չար բաների, այլ՝ բարիների արարիչ»: Նա գրում է, որ չարիքը միակ բանական էակին՝ մարդուն շնորհված ազատականության հետևանք է. «Այժմ հարցնենք հենց մարդկային չարիքների մասին. այդ չարիքները գոյակների արգասիք են, թե գոյակներ: Երբ շարժումներ և հուզումներ են տեղի ունենում մարմնում և հոգում, չի կարելի ասել, թե դրանք մարդ են, այլ կամաճին՝ շարժումներ են, որովհետև մարդը գոյակ է, իսկ բարքը գոյակ չէ, ինչպես օրինակ՝ սպանությունը և անառակությունը, որ բարքերից են բխում» [3, 218]:

Եզնիկի մոտ հանդիպում ենք կենսաբանական վերլուծությունների բազմազման և ժառանգական խնդիրների մասին: Նա ասում է, որ չարն ու բարին ձևավորվում են դեռևս մոր արգանդում: «Միևնույն արգանդում չարն ու բարին միասին հղանալ չեն կարող, ինչպես գայլերն ու գառները մի արգանդից չեն ծնվում: Կովերն էշեր չեն ծնում, գայլերը՝ մաքիներ, ձիերը՝ օձեր և այլն» [6,80]: Հետաքրքիր մեկնաբանություն է տալիս «չարին» ու «բարուն», այսինքն՝ դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշների դրսևորման հավանականությանը: Խոսելով ծնող-սերունդ հատկանիշների դրսևորման մասին՝ Եզնիկը վերլուծում է. «... միթե Զրուան հայրը և բարի էր և չար, բարի երակից՝ բարի որդին եղավ, չար երակից՝ չարը» [6,80]: Արդյոք այս դեպքում խոսքը չի գնում ծնողների հետերոզիգոտ գենոտիպի մասին, որոնց սերնդում ծնվում են երեխաներ դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշներով, այսինքն՝ դրսևորվում են ծնողների թաքնված հատկանիշները:

Մեր կարծիքով, նման արտահայտության տակ պետք է հասկանալ սերունդների անընդհատության շարքում գենետիկական տեղեկատվության փոխանցումը, տեսակին բնորոշ կարիոտիպի պահպանումը սերունդներում, տեսակի ամբողջականության պահպանումը: Այսպիսի վերլուծությունը քրոմոսոմների ան-

ընդհատության կանոնի հաստատում է, ինչի մասին այդ ժամանակաշրջանում դեռևս գաղափար չեն ունեցել:

Հետաքրքիր են Եզնիկի վերլուծությունները երազների կենսաբանական պատճառների վերաբերյալ: Երազների ֆիզիոլոգիական մեխանիզմը ժամանակակից կենսաբանության խնդիրներից մեկն է: Նա մտածում է, որ կան երազների 2 պատճառներ: Առաջինի դեպքում մարդիկ տեսնում են այն, ինչի մասին մտածել են: Դա նման է հայելու մեջ ինքդ քեզ տեսնելուն, այսինքն՝ իրական է: Ներկայումս այս փաստը ֆիզիոլոգները բացատրում են օրվա ընթացքում նյարդային որոշ կենտրոնների դրդվածությամբ, որոնք դրդված են լինում նաև մարդու քնած ժամանակ:

Երկրորդի դեպքում Աստված ցանկանում է մարդուն ինչ-որ բան զգուշացնել, և երազ է ուղարկում մարդուն թշնամու, հաճախ փերիների, չար կանանց կամ սատանայի տեսքով: Արդյո՞ք սա հետաքրքիր բացատրություն չէ երազների կանխագուշակող դերի մասին: Այդ ուղղությամբ կան աշխատանքներ ժամանակակից ֆիզիոլոգիական գրականության մեջ [5]:

Եզնիկի աշխատություններում տրվում են խորը բժշկական գիտելիքներ, ինչը կասկածի տեղիք է տալիս՝ մտածելու, որ նա եղել է բժշկական գիտելիքների գիտակ: Մարդու մարմնի մասին Եզնիկը գրում է. «Նրա վրայից մորթ և միս և մեջը՝ արյան երակներ և խողովակներ և ներքուստ դարձյալ նույնպես մորթ և միս... և է մարմին և ի վերոյ քան գերակս արեանն և ի ներքոյ քան գերական» [6, 84]: Այս մտքերը կարելի է դիտել որպես օրգանիզմում մաշկի և մկանների դասավորության, արյունատար անոթների՝ զարկերակների, երակների ճյուղավորման բացատրության օրինակ:

Եզնիկը քննում է նաև նյութական ու ոչ նյութական գոյակները. «Ինչ որ մեր զգայարաններով շոշափվում կամ զննվում է, այն նյութական է, իսկ ինչ որ զգայարանների վրա չի ազդում՝ ոչ նյութական: Լույսի տարրը նուրբ է, բայց որ աչքով զննվում է, նյութական է: Ուրեմն, աշխարհում կան մարմնականն ու անմարմինը, շնչավորն ու անշունչը, կենդանին ու անկենդանը» [3, 220]: Արդյոք այս խոսքերի տակ չպետք է հասկանալ անկենդան ու կենդանի մարմինների տարբերությունները, որոնք հեղինակը փորձում է տարբերակել զգայությունների առաջացման և զգայարանների միջոցով:

Հետաքրքիր վերլուծություններ ունի Եզնիկ Կողբացին կենդանիներից և բույսերից ստացվող թուրմերի օգտակարության և վնասակարության մասին:

Ահա թե ինչ է գրում Եզնիկը. «Վնասակար բան կա նաև տավարի մեջ, որի մասին ասում են, թե բարի արարչից է ստեղծված: Ցուլի միսն ուտելը բուժիչ է մարմնի համար, բայց եթե մեկը արյունը խմի, կմեռնի: Նույնպես և բանջարեղենների մեջ կա այնպիսին, որ առանձին սպանող է, բայց, ուրիշ բանջարեղենների հետ խառնվելով, տեսակ-տեսակ ցավերի բուժիչ է լինում: Մանրագորն առանձնակի ուտելու դեպքում մահացու է, բայց, ուրիշ արմատների հետ խառնված, քնաբեր է լինում քնատների համար: Հազարը, եթե մեկը տոթ ժամանակ ուտի, քանի որ զովացուցիչ է, տապը փորից կհեռացնի, բայց եթե հով ժամանակ ուտի,

կվնասի, եթե ջուրն քամելով անխառն խմի, կմեռնի, իսկ եթե սերմն աղալով ջրի հետ խմի, ցանկությունից կզցի: Կանեփուկը մի թուփ է, որի սերմը դեղ է և նույնն էլ դարձյալ ցանկությունից զցող է: Մոլախիինը, որ առանձին մի որոշակի ժամանակում սպանիչ է, բժիշկները նրանով կարողանում են հնացած մաղձերը վերացնել: Կաղանչանի մի տեսակը առանձնակի՝ մահացու է, բայց ուրիշ բույսերի հետ խառնված, մաղձադեղ է և մահից փրկող» [2, 55]:

Նա նշում է, որ մոզերի հոգեկան դրությունը և նրանց ուշագնացություններն այնքան լուրջ պատճառներ ունեն, որ դրանք կարելի է համարել հիվանդություն՝ ընկնավորություն:

Եզնիկից բացի իր կենսաբանական և հատկապես բուսաբանական գիտելիքներով աչքի է ընկնում 5-րդ դարի պատմիչ Ազաթանգեղոսը: Նա հետաքրքիր ձևով է բացատրում բույսերի զարնանային զարթոնքը՝ նշելով որ բոլոր բույսերն աճում են զարնանը, կենդանություն ստանում, մեծանում, բողբոջում և պտուղներ են տալիս [6, 90]: Բույսերը զարնանն աճում են, ծաղկում, գեղեցկացնում իրենց շրջակայքը, բայց ոչ մի բույս չի կարող աշնանը վերապրել իր նախկին գեղեցկությունը: Դա նման է մարդու մահանալուն և վերստին հարություն առնելուն, որն, իհարկե, անհնար է: Սա ֆենոլոգիական դիտումների արդյունքում արված սեզոնային երևույթների վերլուծություն է, որը խոսում է հեղինակի՝ բույսի օրգանիզմում ընթացող ֆիզիոլոգիական երևույթների իմացության մասին:

«Վարդապետություն և Գրիգորի» աշխատանքում նա տվել է 67 բույսի անուն՝ յուրաքանչյուրն իր բնորոշ առանձնահատկությամբ: Դա ցույց է տալիս, որ նա ճանաչել է այդ ժամանակի բույսերը և իմացել է դրանց կարգաբանությունը:

Կենսաբանության պատմության մեջ կրկնակի անվանակարգումը տրվել է Կ. Լիննեյի կողմից 17-րդ դարում, բայց դեռևս 5-րդ դարում Ազաթանգեղոսը տալիս է մի շարք բույսերի կրկնակի լատիներեն անվանումներ: Օրինակ, նա տալիս է թզի *Ficus carica*, կարմրախնձորի *Pirus malus*, դափնու *Laurus*, ձիթենու *Olea*, սերկևիլի *Cydonia*, սոճու *Pinus nigriqans*, ուռենու *Salix*, կաղամախու *Populus*, մանուշակի *Viola*, նուշի *Amigdalus communis*, ցորենի *Triticum vulgare*, գարու *Hordeum vulgare* լատիներեն անվանումները [6, 90]:

Բուսաբանական գրառումներից բացի՝ Ազաթանգեղոսն ունի մի շարք դիտարկումներ կենդանիների մասին: Նա տեղյակ էր օձի «շապիկ փոխելու», այսինքն՝ մաշկափոխվելու մասին: Գիտեր արժեքավոր տեղեկություններ թռչունների, նրանց կյանքի և սեզոնային երևույթների մասին: Օրինակ՝ նա նշում է աղավնու մասին. «Մի՛ վասն զի մարդասեր է և մարդընդելն ի մարդամօտի և եթ՛ կամի կեալ աղավնի...: Եւ միւս՝ եթ՛ բազում անգամ բարձցէ ոք զձուս կամ զձագս աղավնոյ՝ ոչ երբեք երկմտեալ թողու զտեղի բունոյ իւրոյ» [6, 94]:

Ազաթանգեղոսը գիտեր նաև Նոյի մասին: Նա գրում է. «Դու որ փրկեցիր Նոյին ջրհեղեղից, փրկիր և մեզ շրջապատող անօրինության հեղեղից, քանզի եթե գազաններին ու անատուններին ապրեցրիր տապանում, առավել ևս կլինայես քո պատկերը կրողներին, որոնք քեզ են փառավորում և եթե սողուններին ու թռչուններին խնայեցիր, որչափ ևս կլինայես մեզ, որ անվանեցիր քո կամքի տաճարը» [1, 77]:

Հայ հին մատենագիրներից իր աշխատանքներով առանձնանում է նաև Ղազար Փարպեցին: Նա տալիս է Արարատյան դաշտավայրի նկարագրությունը, որը ցույց է տալիս, որ հեղինակը լավ ծանոթ է հայրենի բնությանը, բուսական ու կենդանական աշխարհին: Արարատյան դաշտավայրի ճոխ նկարագրությամբ Փարպեցին միակն է հայ գրականության մեջ: Նա գրում է. «...գգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զակնաւորն. Ջամենաբոյսն, զամենաբուզին, զամենալին, զամենագիտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. Ջրաշտս մեծատարածս և որսալիցս. Ջլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարաշտարօտս, զհոճեալս էրերովքն կճղակաբաժինիւք և որոճայնովքն, և այլովք ևս բազմօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարար է անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւվ հացի և զինոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զգանազանումն, իւզաբուզիս սերմանցն» [4, 20]: Այդ վերլուծություններին հանդիպում ենք «Հաճախապատում» աշխատության մեջ, որն ըստ որոշ վարկածների վերագրվում է Մեսրոպ Մաշտոցին, սակայն գրականության տվյալներով աշխատության հեղինակը Ղազար Փարպեցին է: Ըստ «Հաճախապատումի» Աստված է սկզբնապատճառը աշխարհիս և ամեն ինչի: Նա արարիչն է երկնքի, երկրի և այն ամենի, ինչ որ գտնվում է երկնքում, երկրի վրա և ջրի մեջ [6, 96]:

Փարպեցու գիտելիքները ժամանակի «ստուգահմուտ» բժիշկների, նրանց պատրաստած «ախտահալած սպեղանիների» մասին վկայում են, որ Փարպեցին բժշկական խոր գիտելիքներ և կենսաբանական բազմաթիվ տվյալներ ունեցող անձնավորություն է, ով եղել է իր ժամանակի այդ գիտությունների տերը [6, 94-95]: Նա գրում է «Անդ գտանին և ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբամբ՝ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն» [4, 22]: Ահա թե ինչ է գրում Փարպեցին կենդանիների ընտելացման մասին. «Բույսերի և տունկերի մեծ մասը «ի վայելս կենդանեաց». նմանապէս և անասունների նախիրները կերակուր են գազանների ու թռչունների համար, ջրում և ցամաքում ապրողներից շատերը՝ մարդկանց որսի համար և կամ ընտելացվել են՝ «ի հնագանդութեան են անկեալ»: Կան և այնպիսիները, որ ծառայում են հանդերձների գեղեցկության և վայելչության համար» [6, 97]: Ասվածից հասկացվում է, որ հեղինակը քաջատեղյակ է կենդանիների մորթուց և կաշվից ստացվող հումքի մասին:

Փարպեցու աշխատանքներում կան նաև սաղմնաբանական վերլուծություններ: Բոլոր էակներն ու մարմինները Աստված «ի չորից նիւթոց արար... և յօրինեաց կարգաւ...»: Նույն նյութերից է ստեղծված և մարդը: Բայց այնուհետև նոր մարդու առաջացումը տեղի է ունենում «մուօը և աղջամուղջը արգանդում ի սաղմնէն ի հավանութենէ արուին և էգին ըստ օրինաւոր ամուսնութեան...»: Եվ իր ասածը պարզաբանելով՝ նա նշում է, որ մարդը ծնվում է փոքրիկ մարմնով, ապա մեծանում, զարգանում և նորից փոքրանում է ու մահանում [6, 99]: Այստեղ արդեն

խոսքը վերաբերում է օրգանիզմների անհատական զարգացմանը, երբ մոր օրգանիզմում բեղմնավորման արդյունքում առաջացած սաղմը, անհատական զարգացման հաջորդական փուլերն անցնելով, զարգանում է և ձևավորվում որպես ինքնուրույն օրգանիզմ [5]:

Օրգան-համակարգերի մասին հեղինակը նշում է, որ օրգանիզմը բաղկացած է մի ամբողջություն ներկայացնող «անդամներից», «անդամք մարմնոյն մի մարմին են յողեալ և պատշաճեալ», որոնցից յուրաքանչյուրը սակայն իր առանձին գործառությունը, իր առանձին «ներգործությունն» ունի [6, 99]:

Վերջին արտահայտությունը կարելի է նույնացնել ժամանակակից մարդակազմաբանության մեջ հայտնի գործառական համակարգի հետ [5]:

Այսպիսով, գրականության ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ հայ հին մատենագիրները՝ Ագաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին, Ղազար Փարպեցին, դարաշրջանի աշխարհաքաղաքական վերլուծությունից բացի, կատարել են այդ շրջանի բուսական և կենդանական աշխարհի նկարագրություններ, որոնք թույլ են տալիս նրանց դասել այնպիսի գիտնականների շարքին, ինչպիսիք են Թեոֆրաստեսը, Պլինիոս Ավագը և, թող վերամբարձ չենչի, Կարլ Լիննեյը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1997, 191 էջ:
2. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, Երևանի համալսարանի հրատարակչություն, 343 էջ:
3. Եղիազարյան Վ. Ա., Հայ հին գրականության պատմություն, Երևան, «Արմավ» 2014, 488 էջ:
4. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, Երևանի համալսարանի հրատարակչություն, 537 էջ:
5. Մինասյան Ս. Ս. և ուրիշներ, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, դասագիրք ԲՈՒՀ-ի ուսանողների համար, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006, 480 էջ:
6. Տեր-Պողոսյան Ավ. Գ., Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում. հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 571 էջ:

О биологических восприятиях некоторых древнеармянских библиографов

*Варданян Заруи
Киракосян Кристине*

Резюме

Ключевые слова: летописцы, природа, медицинские сообщения, четыре элемента, биолог, натурфилософ

Среди трудов армянских летописцев встречаются не только философские, геополитические, но и биологические, особенно ботанические, зоологические, структурные анализы. Не мало таких работ армянских летописцев, в которых мы находим биологические анализы и медицинские сообщения. Предметом нашего исследования были работы нескольких древних армянских летописцев: Езника Кохбаца, Агатангехоса, Казара Парпеци. Интересны анализы Езника о биологических причинах сновидений. Езник дает интересное объяснение одного из ключевых вопросов современной биологии: сравнение живой и индифферентной природы, учитывая главную особенность мыслительной деятельности живых организмов, а у людей логическое мышление. Кроме Езника, своими биологическими, особенно ботаническими знаниями выделяется летописец 5-ого века Агатангехос. Агатангехос проводит анализ сезонных явлений в результате фенологических наблюдений, что подтверждает знания автора о физиологических явлениях, происходящих в организмах растений. Он первым дал двойные названия растениям, которое впервые было осуществлено натуралистом 17-ого века К. Линнеем. Своими работами выделяется из армянских летописцев Казар Парпеци. Он описал растительность и животный мир Араратской долины, как доказательство того, что автор хорошо знаком с флорой и фауной родной природы.

Таким образом, исследование литературы позволяет сделать вывод, что древние армянские летописцы Езник Кохбаца, Агатангехос, Казар Парпеци кроме анализа космополитизации, описали растительный и животный мир того времени, что позволяет причислить их к ряду таких ученых, как Теофраст, Плиний-старший, и пусть не звучит высокопарно - Карл Линней.

About the Biological Perception of Several Ancient Armenian Bibliographers

Vardanyan Zaruhi

Kirakosyan Qristine

Summary

Key words: *bibliographers, nature, medical records, four elements, biologist, natural philosopher*

Not only philosophical, geopolitical, but also biological, particularly botanical, zoological, structural analyses of the period are among the works of Armenian biographers. There are a lot of works of Armenian biographers, in which we find biological analyses and medical records. The subject of our study was the works of several ancient Armenian biographers - Yeznik Koghbatsi, Agatangeghos, and Ghazar Parpetsi. Interestingly, Yeznik Koghbatsi analyzes the biological causes of dreams. Yeznik Koghbatsi gives an interesting explanation of one of the key issues of contemporary biology, i.e. the comparison of living and dead nature, as an important attribute of living organisms, as well as logical reasoning skills of people. Besides Yeznik Koghbatsi, Agatangeghos, the 5th century historian, is distinguished by his biological and botanical knowledge. Agatangeghos performs the analysis of seasonal phenomena, as a result of phenological views, which speaks of the author's knowledge of physiological phenomena, taking place in plants. For the first time, he gave the herbs double Latin names, which was in the history of biology by K. Linne, the 17th century naturalist. Among the Armenian ancient biographers Ghazar Parpetsi is distinguished by his works: He gives the description of Ararat valley, which indicates the fact that the author is well aware of the flora and fauna of mother nature.

Consequently, by studying literature, we have concluded that the ancient Armenian biographers, like Yeznik Koghbatsi, Agatangeghos, and Ghazar Parpetsi, besides geopolitical analysis, have described the flora and fauna of that century, which allows us to rank them among such scientists as Theophrastus, Plinius the senior and K. Linne.